

Թիւնը, որ մին միւսի վրայ յարձակուած ժամանակ, ոչ թէ հաշուի կ'առնէ որ նա Հայ է կամ Քիւրդ, այլ որ երկուքն ալ հաւասարապէս կը պատկանին նոյն իշխանութեան կամ ցեղապետութեանը :

Տիգրիս գետի երկու ափերին բաժանուած Քիւրդերը, առանց ազգայնական ու կրօնական խտրութեան հայերն ի միասին առած՝ աշխարհազրական բաժանումներով երկու զխաւոր թէ՛նամի կողմերի են բաժնուեր, անուանուելով «աջ, ձախ» : կամ ըստ Քիւրդերէնի՝ «բասկէ բաստէ, բասկէ ձապէ .» հասարակաց լեզուով՝ «ձապ, ձօպ» :

Կայ նոյնպէս ուրիշ տարրեր զխաւոր բաժանմունք մը ևս, որ կը կոչուի «Զիլ, Միլ» :

Այս բաժանմունքները իրենց թէ՛նամութիւնները կը վարեն անտեսական հողի վրայ, և ազգայնութիւններն՝ ի միասին աշխարհազրական բաժանումներով կը կուռին իրար դէմ ու կը պաշտպանուին իրար դէմ :

Օրինակ. Շատախի չրջանը կայ ցեղական կամ աշխարհազրական ընդհանուր անուն մը Արսօճի . Արտօջլինները բաժան չեն, բայց ունին և կամ կազմուած են, յիսունի մօտ ցեղերէ իրենց առանձին անուններով . բայց ամենքը կը կոչուին Արտօջլիներ . մօտաւորապէս 2500 տուն . ամառը կուգան Նօրտուղի լեռները, իսկ ձմեռը կիջնեն Մուսուլի դաշտերը . Արտօջլինները միացած են Ասորինիու հետ, և երբ կռիւներ վարեն հակառակօրդ ցեղերու դէմ, Ասորիններ իրենց հետ կը կուռին համերաշխ ու ի միասին :

«Զիլ, Միլ» բաժանմունքը Պարսկա-Ռուսական սահմանագլխէն կ'սկսի և հայկական նահանգները մէջն առած կը հասնի մինչ Կարին :

Սասունը . Սասունի լեռնականները Հայ և Քիւրդ՝ երկուքն ալ կը համարուին մէկ Աշիրէթ, ու կը կոչուին Սասունցի և Ամիգասէ (հօրեղբորդիներ) :

Շատ առաջներ, այս չրջանի Հայերն ու Քիւրդերը միուլթիւն կազմելով միշտ կուռեր են Թիւրք բռնապետական րէ-